ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ հանրությանը

2025 թվականի ընթացքում Մեծամոր հանայնքի ղեկավարի գործունեության մասին

Համայնքի ղեկավար՝ Էդգար Հովհաննիսյան

ՄԵԾԱՄՈՐ 2026

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառում

Մեծամոր համայնքի ղեկավարը 2025 թվականի ընթացքում քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառում, օրենքով սահմանված կարգով իրականացրել է քաղաքացիների ընդունելությունը, քննության է առել քաղաքացիների դիմումներն ու բողոքները և ձեռնարկել է դրանց լուծմանն ուղղված համապատասխան միջոցներ:

Տարվա ընթացքում Մեծամորի համայնքապետարան մուտք է եղել 11182 գրություն, որոնք քննարկվել և պատասխանվել են ժամանակին և պատշաճ կերպով, տրամադրվել է տարբեր բնույթի թվով 17694 տեղեկանք, ելք է եղել թվով 6225 գրություն, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է տարբեր բնույթի թվով 2446 որոշում, արձակվել է թվով 743 կարգադրություն:

2025 թվականի ընթացքում հայտարարվել է համայնքային ծառայողների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների վերաբերյալ թվով 33 մրցույթ, ինչպես նաև կազմվել է 65 անձնական գործ և աշխատանքից ազատվել է 35 աշխատակից:

2025 թվականի ընթացքում համայնքի ավագանու կողմից ընդունվել է տարբեր բնույթի թվով 226 որոշում:

Մեծամոր համայնքի վարչական տարածքում տարբեր բնույթի իրավախախտումներ կատարած թվով 40 ֆիզիկական և իրավաբանական

անձանց նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ, որոնցից 20-ը՝ ֆիզիկական անձանց և 21-ը՝ իրավաբանական անձանց նկատմամբ:

Հարուցված թվով 40 վարչական վարույթներից 17-ը՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, 7-ը՝ ինքնակամ կառուցված ապօրինի կառույցների, 10-ը՝ փոխադրամիջոցի գույքահարկի գծով չվճարված հարկային պարտավորությունների, 4-ը՝ տեղական հարկերի և տուրքերի չվճարված պարտավորությունների և 2-ը՝ ոչ սահմանված վայրում առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելու դեպքերով:

Հարուցված թվով 40 վարչական վարույթներից 19-ով նյութերն ուղարկվել են հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում

Համայնքի բնակիչների իրազեկվածությունն ապահովելու նպատակով պարբերաբար իրականացվում են տեղեկատվական հրապարակումներ համայնքապետարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում և պաշտոնական կայքում: Դրանց միջոցով բնակիչներին տրամադրվում է ամբողջական, ճշգրիտ և ժամանակին տեղեկատվություն համայնքում իրականացվող և նախատեսվող ծրագրերի, միջոցառումների, ինչպես նաև այլ կարևոր իրադարձությունների վերաբերյալ:

Բնակիչների հետ անմիջական կապի և արդյունավետ հաղորդակցության ապահովման նպատակով համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելություն է կազմակերպվում յուրաքանչյուր հինգշաբթի օրը: Միաժամանակ, հրատապ հարցերի առկայության դեպքում համայնքի ղեկավարը քաղաքացիներին ընդունում է նաև սահմանված ընդունելության օրերից դուրս՝ ապահովելով արագ արձագանք և խնդիրների օպերատիվ լուծում:

Համայնքի զարգացման գործընթացներում բնակիչների ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով կիրառվում է մասնակցային բյուջետավորման գործիքակազմը, որի շրջանակներում քաղաքացիները հնարավորություն ունեն

ներկայացնելու առաջարկներ և անմիջականորեն ներգրավվելու համայնքային առաջնահերթությունների ձևավորման և զարգացման ծրագրերի իրականացման գործընթացին:

Եկամուտների բնագավառում

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2025 թվականի բյուջեի փաստացի եկամուտները կազմել է 545775,8 հազար ՀՀ դրամ, պլանավորված 5211738,8 հազար ՀՀ դրամի փոխարեն, որը կազմել է ընդհամենը եկամուտների 104,7 %: Սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 1370347,0 հազար ՀՀ դրամ՝ պլանավորված 1111986,8 հազար ՀՀ դրամի փոխարեն, որի արդյունքում սեփական եկամուտների պլանը կատարվել է 123,2 %:

Եկամուտների անվանումը	*Հազ. դրամ*		
	պլան	*Փաստացի*	*Կատ. %*
Ընդհամենը վարչական բյուջեի եկամուտներ	*4613689,5*	*4872049,7*	*105.5*
Որից՝ սեփական եկամուտներ	*1111986,8*	*1370347,0*	*123,2*
1. Հարկեր և տուրքեր այդ թվում	*841000.0*	*881239.8*	*104.7*
Գույքային հարկեր անշարժ գույքից	*316000.0*	*342972.3*	*108.5*
ա/Գույքահարկ շենքորի շինություններից	*1000,0*	*3619,9*	*361.9*
բ/ Հողի հարկ	*15000.0*	*63431.79*	*242.8*
գ/ Անշարժ գույքի հարկ	*300000.0*	*275920.6*	*91.9*
1.2 Գույքահարկ այլ գույքից	*500000.0*	*486619.17*	*97.3*
ա/Գույքահարկ փոխադրամիջոցներից	*500000.0*	*486619.17*	*97.3*
1.3 Տեղական տուրքեր	*25000.0*	*51648.3*	*206.59*
ա/Շինարարության թույլտվություն	*6095.0*	*30473.0*	*449.9*
բ/Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար	*5120,0*	*5289,5*	*103*
գ/Առևտրի և տեխ.սպասարկման կետերում տեխնիկական հեղուկների վաճառքի փույլտվություն	*820,0*	*631,2*	*76,9*
ե/Ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն	*9582,0*	*9473,04*	*98,86*
զ/Գյուղ մթերքների բացօթյա վաճառք	*200,0*	*1214,6*	*607,3*

է/ Վառելիքի, քսայուղերի բացօթյա վաճառքի թույլտվություն			
ը/Համայնքի տարածքում արտաքին գուազդի թույլտվություն	1706.0	2396.68	140.4
թ/Քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության թույլտվություն	500.0	516.1	103.2
ժ/ Հանրային սենդի, զվարճանքի, շահումով խաղերի կազմակերպման օբյեկտներ	125.0	744.0	595.2
ի/ Հանրային սենդի կազմակերպման և իրացման թույլտվություն	544.0	560.1	102.9
լ/Ֆիրմային անվանումների օգտագործման թույլտվություն	300.0	350.0	116.6
2.Պաշտոնական դրամաշնորհներ	3501702.7	3501702.7	100
ա/Դոտացիա	3496473.4	3496473.4	100
բ/Սուբվենցիա	5229.3	5229.3	100
գ/Կառավարման այլ մակարդակներից դրամաշնորհներ	598049,3	598049,3	100
3.Այլ եկամուտներ Այդ թվում՝	270986.8	489107.1	180.49
3.1Վարձակալությունների դիմաց վճարներ	55000.0	71370.91	129.7
ա/Հողի վարձակալության վճար	45000.0	54087.97	120.1
բ/Տարածքի վարձակալության վճար	10000,0	14799,6	147,9
3.2 Մատուցված ծառայությունների դիմաց վճարներ Այդ թվում՝	32000.0	51443.0	130.7
3.3Տեղական վճարներ՝ Այդ թվում	132000.0	173504.6	131.4
ա/Շին ավարտի փաստագրում	0	1380,0	
բ/հողերի հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալությամբ տրամադրելու փաստ.կազմ/	0	4802,700	
գ/Աղբահանության դիմաց վճարներ	35000.0	53864.9	153.8
դ/Մրցույթների և աճուրդների կազմակորպումից վճար	100.0	15.0	1.5
ե/Մանկապարտեզների ծառայությունների դիմաց վճարներ	80000.0	92420.6	115.5
զ/Արվեստի դպրոցի և մարզադպրոցի ծառայությունների դիմաց վժարներ	16000.0	20877.3	130.4
դ/Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	10000,0	5208,9	52
3.4Շինարարության օրինականացում	10000,0	5208,9	52,0
3.5Վարչական իրավախախտումներից եկամուտներ	0	19838,5	
3.6Այլ եկամուտներ	41986,8	167741,1	399,5
Ֆոնդային բյուջե	1350979,3	585726,1	43.4
1.Կապիտալ դրամաշնորհներ	4099752.0	4087005.52	99.68
2.Այլ եկամուտներ	41986,8	167741,1	399,5
ԸՆԴՀԱՄԵՆԸ	5211738,8	5457775,8	104,7

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2025 թվականի բյուջեի փաստացի ծախսը կազմել է՝ 4849167,1 հազար դրամ պլանավորած ՝ 6503549,8 հազար դրամի դիմաց, հետևյալ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ.

Բովանդակություն	Պլան	Փաստացի
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1328276,8	1180117,3
ա/ Օրենսդիր և գործադիր մարմին	1265466,8	1 139 021,2
• Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	710000,0	652452,6
• պարգևատրումներ	167000,0	162876,6
• այլ վարձատրություններ	9000,0	8350,4
• Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	500,0	-
• Էներգետիկ ծառայություններ	84480,3	71627,2
• Կոմունալ ծառայություններ	6011,4	5118,4
• Կապի ծառայություններ	9025,7	7227,8
• Ապահովագրական ծախսեր	3058,2	1762,2
• Ներքին գործուղումներ	1500,0	181,5
• արտասահմանյան գործուղումներ	10000,0	1525,7
• Համակարգչային ծառայություններ	200,0	-
• Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	500,0	402,0
• մասնագիտական ծառայություններ	34900,0	31204,0
• տեղեկատվական ծառայություններ	400,0	68,9
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4500,0	2490,9
• շենքերի շինությունների ընթացիկ նորոգում	990,0	217,6
• մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	15157,2	5606,0
• գրասենյակային նյութեր	7000,0	3782,3
• տրանսպորտային նյութեր	53000,0	45297,0
• կենցաղային և հանրային սննդի նյութեր	4000,0	2924,8
• հատուկ նպատակային նյութեր	2000,0	1575,0
• շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում	105314,0	98177,4
• վարչական սարքավորումներ	35930,0	35489,9
• այլ մեքենաներ և սարքավորումներ	1000,0	663,0
բ/ Ընդհանուր բնույթի ծառայություններ	12300,0	11620,8
• համակարգչյան ծառայություններ	11000,0	10872,0
• տեղեկատվական ծառայություններ	1300,0	748,8
գ/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	50510,0	29475,4
• գույքի և սարքավորումների վարձակալություն	2060,0	1036,0
• Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	5000,0	2848,0
• Մասնագիտական ծառայություններ	18000,0	10705,1
• Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	950,0	-
• հատուկ նպատակային նյութեր	12500,0	7595,0
• պարտադիր վճարներ	11000,0	6681,3
• այլ մեքենաներ և սարքավորումներ	1000,0	610,0
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1302057,4	513224,0

ա/ Գյուղատնտեսություն	32000,0	30384,1
• Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	32000,0	30384,1
բ/ Ոռոգում	1500,0	450,0
• Նախագծահետազոտական ծախսեր	1500,0	450,0
գ/ Գազաֆիկացում	324533,2	211177,0
• շենքերիշինությունների շինարարություն	322383,2	211177,0
• նախագծահետազոտական ծախսեր	2150,0	-
դ/ Ճանապարհային տրանսպորտ	1097024,2	352432,0
• գույքի և սարքավորումների վարձակալություն	990,0	-
• Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	10000,0	-
• Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	30620,0	30620,0
• Հատուկ նպատակային այլ նյութեր	14400,0	14400,0
• Ճանապարհների ընթացիկ նորոգում	779487,1	175716,9
• ճանապարհների կապիտալ վերանորոգում	195027,1	131695,1
• նախագծահետազոտական ծախսեր	66500,0	-
ե/ Տնտեսական հարաբերություններ/ այլ դասերին չպատկանող/	-150000,0	-81219,1
• մուտքեր հողի օտարումից	-150000,0	-81219,1
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	454595,0	418254,5
ա/ Աղբահանություն	360455,0	356853,2
• սուբսիդիաներ	360455,0	356853,2
բ/ Շրջակա միջավայրի պաշտպանություն	94140,0	61401,3
• սուբսիդիաներ	16330,0	15579,7
• շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում	63810,0	41874,6
• Այլ մեքենաներ և սարքավորումներ	4000,0	3947,0
• նախագծահետազոտական ծախսեր	10000,0	-
4. ԲՆԱԿ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1682234,1	1363341,6
ա/ Բնակարանային շինարարություն	427841,4	369869,3
• սուբսիդիաներ	226000,0	214320,8
• այլ կապիտալ դրամաշնորհներ	15530,0	14652
• շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում	171381,4	137672,5
• նախագծահետազոտական ծախսեր	10000,0	-
• Հող	4930,0	3223,0
բ/ Ջրամատակարարում	1076335,6	879131,3
• Էներգետիկ ծառայություններ	383509,3	358255,8
• Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	50000,0	42200,0
• սուբսիդիաներ	113420,0	78774,3
• շենքերի շինություններ կառուցում	347453,0	255600,2
• շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում	147451,3	114830,1
• Վարչական սարքավորումներ	26502,0	26440,8
• նախագծահետազոտական ծախսեր	8000,0	3030,0
գ/ Փողոցների լուսավորություն	178057,1	114341,0
• Էներգետիկ ծառայություններ	46127,1	42148,1
• սուբսիդիաներ	72750,0	67490,9
• շենքերի շինություններ շինարարություն	53470,0	-

• նախագծահետազոտական ծախսեր	5710,0	4702,0
5. ՀԱՆԳԻՍՏՄ ՄՇԱԿՈՒՅԹ, ԿՐՈՆ	241038,0	193856,0
ա/Հանգստի սպորտի ծառայություններ	1280,0	-
• Կենցաղային և հանրային սննդի նյութեր	300,0	-
• Հատուկ նպատակային այլ նյութեր	980,0	-
բ/ Գրադարան	29025,0	28280,2
• սուբսիդիաներ	29025,0	28280,2
գ/ Մշակույթի տուն	175733,0	134009,2
• Էներգետիկ ծառայություններ	25133,0	21468,8
• սուբսիդիաներ	144300,0	107518,5
• շենքերի շինություններ կառուցում	1300,0	1225,0
• Վարչական սարքավորումներ	5000,0	3797,0
դ/ Այլ մշակույթային կազմակերպություններ	35000,0	31567,0
• Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	29000,0	28108,6
• Կենցաղային և հանրային սննդի նյութեր	3000,0	2213,0
• Հատուկ նպատակային այլ նյութեր	3000,0	1245,1
6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1370188,5	1173538,2
6.1. Նախադպրոցական դաստիրակություն	1092604,6	960537,5
• Հատուկ նպատակային այլ նյութեր	15000,0	14815,4
• սուբսիդիաներ	672881,0	613809,5
• ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններ	38889,8	30921,0
• շենքերի շինություններ շինարարություն	65385,0	64282,5
• շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում	279128,8	219184,0
• վարչական սարքավորումներ	2000,0	998,1
• Ոչ նյութական հիմնական միջոցներ	3000,0	2969,0
• նախագծահետազոտական ծախսեր	16320,0	13558,0
6.2 Հանրակրթական ուսուցում	4700,0	4464,0
• ընթացիկ դրամաշնորհներ	4700,0	4464,0
6.3 Արտադպրոցական դաստիարակություն	272883,9	208536,7
• Հատուկ նպատակային այլ նյութեր	7000,0	6664,0
• սուբսիդիաներ	249760,0	187819,7
• ընթացիկ դրամաշնորհներ	7426,6	7423,6
• շենքերի շինություններ շինարարություն	7200,0	6629,0
• նախագծահետազոտական ծախսեր	1500,0	-
7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	8400,0	6835,6
• Այլ նպաստներ բյուջեից	5400,0	4262,0
• նվիրատվություններ	3000,0	2573,6
8. ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ	116760,0	
• Պահուստային միջոցներ	116760,0	-
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	6503549,8	4849167,1

Մնացորդը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1911419,7 հազար դրամ, որից

- Վարչական բյուջեի մնացորդ 1559562,9 հազար դրամ

- Ֆոնդային բյուջեի մնացորդ 351856,8 հազար դրամ:

Առևտրի և ծառայությունների բնագավառում

2025 թվականի ընթացքում համայնքի տարածքում տրամադրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի 510, հանրային սննդի կազմակերպման և իրացման 40, արտաքին գովազդի տեղադրման 94, հեղուկ վառելիքի 36, մանրածախ առևտրի կետերում տեխնիկական հեղուկների 41, հեղուկացված գազերի 56, ֆիրմային անվանման թույլտվություններ 6:

Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացվել է հսկողություն, որի արդյունքներն են:

Հաշվետու ժամանակաշրջանում գործող օբյեկտների քանակը.

- Առևտուր-215
- Հանրային սնունդ- 19
- Կենցաղային ծառայություն- 42

Տարվա ընթացքում հսկողություն իրականացված օբյեկտների քանակը.

- Առևտուր- 353
- Հանրային սնունդ- 38
- Կենցաղային ծառայություն – 84

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում 2025 թվականին ընթացքում Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության ոլորտում թվով 17 բնակավայրերում տեղադրվել են էլեկտրական շչակներ: Բամբակաշատ, Արմավիր, Նոր Կեսարիա, Գետաշեն, Բերքաշատ, Եղեգնուտ, Նորապատ, Արևիկ, Նալբանդյան, Փշատավան, Ալաշկերտ և Երասխահուն բնակավայրերում

անցկացվել են «Ազդարարում, պատրաստում և տարհանում» թեմայով ուսումնավարժանքներ:

Պաշտպանության կազմակերպման բնագավառում

2025 թվականի ընթացքում հավաքագրվել է Մեծամոր համայնքում հաշվառված պատանիների ցուցակները և ուղարկվել ՀՀ ՊՆ զինկոմիսարիատ և ԶՀԾ Արմավիրի մարզային ստորաբաժանում: Պահեստազորում ընդգրկված և համայնքում հաշվառված քաղաքացիներին է տրամադրվել վարժական հավաքներին մասնակցելու ծանուցագրերը:

Ապահովվել է ամառային և ձմեռային զորակոչին ենթակա, համայնքում հաշվառված և նախապես ծանուցված քաղաքացիների ներկայությունը բժշկական հետազոտությունների համար:

Համայնքապետարանը կազմակերպել է ՀՀ ՊՆ զինկոմիսարիատ և ԶՀԾ Արմավիրի մարզային ստորաբաժանման կողմից ամառային և ձմեռային զորակոչի ծանուցագրերի տրամադրում:

Կատարվել է պահեստազորում ընդգրկված և համայնքում հաշվառված քաղաքացիների ցուցակների ճշգրտման աշխատանքներ:

Ճշտվել է Մեծամոր համայնքի հաշվեկշռում գտնվող տրանսպորտային միջոցների ցուցակները, որոնք ըստ օրենքի ներգրավված են խաղաղ պայմաններում և վարժական հավաքներին:

ՀՀ ՊՆ զինկոմիսարիատ և ԶՀԾ Արմավիրի մարզային ստորաբաժանումից ստացել եմ հերթական բուժզննման համար անվանական ծանուցագրեր և հանձնվել է հասցեատերերին:

Վարվել է Մեծամոր համայնքի պահեստազորի գրանցամատյանները:

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառում

Մեծամոր համայնքի ենթակայությամբ գործում է 22 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, գործող մանկապարտեզները գտնվում են Ալաշկերտ, Ակնալիճ, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արմավիր, Բամբակաշատ, Եղեգնուտ, Մարգարա, Մեծամոր, Զարթոնք, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նորապատ, Ջանֆիդա, Զարթոնք, Արևիկ, Փշատավան, Տարոնիկ, Տանձուտ բնակավայրերում: Համայնքն ունի 4 գործող արվեստի և երաժշտական դպրոցներ՝ Մեծամոր, Արմավիր, Արևիկ, Նալբանդյան բնակավայրերում, ինչպես նաև «Մեծամորի մարզադպրոց», «Մշակույթի տուն և գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ Մեծամոր քաղաքում:

Կրթություն

2025 թվականի ընթացքում Մեծամոր համայնքում կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտում իրականացվել են.

- շրջայցեր, ստուգայցեր, ինչպես նաև միջոցառումների մասնակցություն համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում:
- Տարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել են նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթները (Նալբանդյան, Փշատավան, Նոր Արմավիր, Տարոնիկ, Բամբակաշատ, Ակնալիճ բնակավայրերի մանկապարտեզներում):
- 2025 թվականին Մեծամոր համայնքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում անցկացվել են մանկավարժական աշխատողների թափուր պաշտոնները զբաղեցնելու մրցույթները:

- 2025 թվականի ապրիլի 21-ին տեղի է ունեցել Տարոնիկ, իսկ 2025 թվականի մարտի 22-ին Փշատավան բնակավայրերում տեղի է ունեցել նորակառույց մանկապարտեզների բացման արարողությունը:
- 2025 թվականի նոյեմբերի 3-ին տեղի է ունեցել Տանձուտ գյուղի մանկապարտեզի բացման արարողությունը:

Մշակույթ

- Ապրիլին կազմակերպվել և անցկացվել է Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումը (մաս 1-հանդիպում ԵՊՀ ֆակուլտետի դեկան Նաղաշ Մարտիրոսյանի հետ, մաս 2- գեղարվեստական ծրագիր՝ Արմավիր գյուղի արվեստի դպրոցի ժողգործիքների համույթի, «Երկիր Նաիրի» պարային համույթի, Շ.Ազնավուրի արվեստի դպրոցի սաների մասնակցությամբ):
- Մեծամորի Մշակույթի տանը կազմակերպվել է «Մշակութային Մեծամոր» խորագրով բազմաոճ պարերի փառատոնը:
- 2025 թվականի հունիսի 1-ին Մեծամոր քաղաքի մշակույթի տան հարակից բակում Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ կազմակերպվել և անցկացվել է ցուցահանդես-վաճառք, ինչպես նաև համերգային ծրագիր:
- 2025 թվականի հուլիսի 1-ին Մեծամոր քաղաքի մշակոյթի տանը անցկացվել է Մորիս Գրիգորյանի ծննդյան օրվան նվիրված ցուցահանդես՝‹‹Ուսուցիչը և սանը›› խորագրով:
- Ս/թ. սեպտեմբերի 26-ին մասնակցություն Երևան քաղաքի Ազատության հրապարակում կայացած «Ճանաչի՛ր Հայաստանը» ամենամյա ներքին զբոսաշրջային ցուցահանդես ծրագրին:
- 2025 թվականի դեկտեմբերի 20-ին տեղի է ունեցել Մեծամոր համայնքի տոնածառի լույսերի վառման արարողությունը;

Սպորտ

- Տարվա ընթացքում սպորտի բնագավառում հաջողություններ ձեռք բերած մարզիկները խրախուսվել են շնորհակալագրերով և դրամական պարգևներով և նվերներով:
- 2025 թվականի մարտին Մեծամոր քաղաքի Սաշա Գալստյանի անվան N2 ավագ դպրոցում կազմակերպվել և անցկացվել է «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական թենիսի մրցաշարը:
- 2025 թվականի մարտին Մեծամորի մարզադպրոցում անցկացվել է «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը:
- 2025 թվականաի մայիսի 7-ին անցկացվել է ՀՀ վարչապետի գավաթ սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարը:
- 2025 թվականի մայիսի 27-ին անցկացվել է Խառը մարտարվեստի (MMA) ցուցադրական ‹‹Մեծամորի 10 լավագույն մենամարտեր›› մրցաշարը:
- 2025 թվականի հոկտեմբերի 7-ին Մեծամորի մարզապրոցում իրականացվել է ՀՀ Վարչապետի հովանու ներքո անցկացվող «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղերը:

Երիտասարդություն

- 2025 թվականի ապրիլի 30-ին ‹‹Մեծամորի Երիտասարդ դեսպաններ›› ծրագրի շուրջ քննարկում՝ երիտասարդների և համայնքապետարանի աշխատակիցների մասնակցությամբ:
- 2025 թվականից Մեծամոր համայնքի շուրջ 480 ուսանողներ օգտվում են անվճար ուսանողական երթուղուց:/ Մեծամոր համայնքում ընդգրկված 30 գյուղական և 1 քաղաքային բնակավայրերում բնակվող ուսանողները /

Գյուղատնտեսության բնագավառում

2025 թվականի ընթացքում Մեծամոր համայնքում իրականացվել են գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտի հետևյալ միջոցառումները.

1. Մեծամոր համայնքի 18 բնակավայրերում իրականացվել է գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն. մասնավորապես՝ հողօգտագործողների կողմից ներկայացվել է հողատեսքի փոփոխման 118 դիմում: Դրանց հիման վրա տրամադրվել է բարձրարժեք հողատեսքը ցածրարժեքի փոխադրելու 35 և ցածրարժեքը բարձրարժեքի փոխադրելու համայնքի ղեկավարի 83 որոշում:
2. Իրականացվել է համայնքի բնակավայրերում մշակաբույսերի, ցանքատարածությունների ամենամյա հաշվառում: Տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային տեսչություն:
3. Համայնքի 31 բնակավայրերում իրականացվել է անասնագլխաքանակի ամենամյա հաշվառում և ներկայացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային տեսչություն:
4. Իրականացվել է համայնքի բնակավայրերում ջրօգտագործման մասին վարչական վիճակագրական հաշվետվության ամենամյա հաշվառում: Տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն:
5. Իրականացվել է համայնքի բնակավայրերում թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին վարչական վիճակագրական հաշվետվության ամենամյա հաշվառում: Տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն:
6. ՀՀ կառավարության «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի շրջանակներում իրականացվել է համայնքի թվով 27 հողօգտագործողների՝ ծրագրի մասնակցության համար անհրաժեշտ

փաստաթղթերի հավաքագրում, 133,7385 հա պայմանագրերի կնքում և կատարված ցանքատարածությունների մոնիթորինգ:

7. Իրականացվել է համայնքի բնակավայրերում 2024 և 2025 թվականների ընթացքում տեղացած կարկուտի հետևանքով տուժած 2944 հողօգտագործողների վերաբերյալ տվյալների հավաքագրում: Տվյալները ներկայացվել են ՀՀ Արմավիրի մարզային հանձնաժողովին:
8. Համայնքի բոլոր բնակավայրերում իրականացվել է համայնքային ենթակայության 121 հակակարկտային կայանների շահագործման վերահսկողություն:
9. Մեծամոր համայնքի Զարթոնք, Եղեգնուտ, Արևիկ, Գետաշեն, Ջանֆիդա բնակավայրերում կազմակերպվել և իրականացվել են ԱԿԽ հանքավայրերի արդյունահանման, երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ թվով 18 հանրային քննարկումներ:
10. Համայնքի բնակավայրերում գործող ԱԿԽ հանքավայրերում պարբերաբար իրականացվել է մորիթորինգ, հայտնաբերված խախտումների մասով կազմվել են արձանագրություններ:
11. Համայնքի բնակավայրերի բնակիչների կողմից ներկայացվել են բնապահպանության ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ դիմումներ, որոնց շրջանակներում ձեռնարկվել են համապատասխան գործողություններ:
12. Համայնքի բնակավայրերում իրականացվել են գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ: Բաշխվել է «Բրոդիֆան» տեսակի 84 լիտր և «Բրոդիֆակում» տեսակի 77 լիտր մկնասպան նյութ:

Սոցիալական աջակցության և առողջապահության բնագավառում

2025 թվականի ընթացքում Մեծամոր համայնքում իրականացվել են սոցիալական աջակցության և առողջապահության հետևյալ միջոցառումները:

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանը սոցիալական և առողջապահության ոլորտներում իրականացվող աշխատանքների ընթացքում համագործակցել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Արմավիրի տարածքային միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ), և այլ պետական կառույցների հետ:

2025 թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում մուտքագրվել է 15 սոցիալական աջակցության առցանց դիմում, սակայն դիմումները չի բավարարվել 2024թ-ի նոյեմբերի 18-ի «Սոցիալական աջակցության մասին» օրենքի մեջ փոփոխությունների պատճառով: Եղել են նաև հրատապ կամ չնախատեսված իրավիճակների առաջացմամբ պայմանավորված դիմումներ որոնց քննարկման արդյունքում Համայնքի ղեկավարի ընդունած որոշումներով և Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի N 7 որոշման 15-րդ կետով, բժշկական հաստատություններին բժշկական օգնության և սպասարկման ծախսերը հատուցելու նպատակով հատկացվել է գումար ընդհանուր՝ 1.950.000 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, և Մեծամոր համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 2-ի N 7 որոշման 16-րդ կետի 2-րդ ենթակետով հատկացվել է դրամական աջակցություն՝ ուսման վարձի մասնակի փոխհատուցում 212.000 (երկու հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամի չափով:

Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 28-ի N94 որոշմամբ հաստատվել է խնամակալության և հոգաբարձության մարմնի կանոնադրությունը և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (ԽՀՀ) անհատական կազմը՝ բաղկացած ինը անդամից: Ձևավորումից ի վեր, հանձնաժողովը պատշաճ ուսումնասիրել է քաղաքացիներից ստացված բոլոր դիմումները, ըստ անհրաժեշտության կատարել տնային այցելություններ՝ կազմելով ընտանիքի կենսապայմանների հետազոտման ակտ:

2025 թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում կայացել է ԽՀՀ 16 նիստ, այդ թվում՝ ընդլայնված կազմով, որին հրավիրվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Արմավիրի տարածքային միասնական սոցիալական ծառայության(ՄՍԾ), ոստիկանության, հանրակրթական ուսումնական հաստատության և ՀԿ ներկայացուցիչներ: Բոլոր նիստերի օրակարգում տեղ գտած հարցերի քննարկման արդյունքում կազմվել է համապատասխան եզրակացություն խնամակալության և հոգաբարձության մարմնի, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել շուրջ 9 որոշում, որոնց օրինակները տրամադրվել են դիմումատուներին:

Մեծամորի համայնքապետարանը սերտորեն համագործակցել է հասարակական կազմակերպությունների հետ՝ ընդառաջ գնալով համայնքի բնակչության առանձին խմբերին սոցիալական ծառայություններ մատուցելուն ուղղված առաջարկներին, ինչպես նաև գործուն աջակցություն ցուցաբերել մի շարք սոցիալական ծրագրերի իրականացման գործում:

Մեծամոր քաղաքում գործում են «Ընտանիք և համայնք» և «Հույսի Մեծամոր» ՀԿ-ները, որոնք մի շարք հումանիտար ծրագրեր են իրականացրել սոցիալապես անապահով ընտանիքներին և հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում:

Մեծամոր համայնքում բնակվում են Արցախից տեղահանված շուրջ 1326 անձ,որից Մեծամոր քաղաքի հյուրանոցում ժամանակավորապես բնակվում են 16 ընտանիք՝ 45 շնչով, որոնք մշտապես գտնվել են համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:

Մեծամորի համայնքապետարանի ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի, «Սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ-ի, Արմավիրի զարգացման կենտրոնի (ԱԶԿ) և այլ կազմակերպությունների նախաձեռնած սեմինարներին, գիտաժողովներին, կլոր սեղան-քննարկումներին:

Մեծամոր համայնքում գործում են 20 բժշկական ամբուլատորիա և 9 բժշկական մանկաբարձական կենտրոն (ԲՄԿ): Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկվել են քայլեր համայնքում բժշկական օգնության որակի բարձրացման ուղղությամբ: Համայքնապետարանում հրավիրվել է «Մեծամորի

առողջապահություն» ՀՈԱԿ-ի տնօրենի, ընտանեկան բժիշկների և բուժաշխատողների խորհրդակցություն և հանձնարարվել ողջամիտ ժամկետներում վերացնել թերություններն ու բացթողումները:

Յուրաքանչյուր ամիս համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի կողմից հավաքագրվել է բժշկական ամբուլատորիաների ամսեկան հաշվետվությունները և փոխանցվել ՀՀ Արմավիրի մարզպետարան:

Անհրաժեշտությունից ելնելով, Մեծամորի համայնքապետարանը համագործակցել է Մեծամորի բժշկական կենտրոնի հետ՝ համայնքապետարան դիմած բնակչության խոցելի խմբերին օրենքով սահմանված կարգով հասանելիք դեղորայքի ձեռքբերման, պետպատվերի շրջանակներում բժշկական ծառայություններից օգտվելու և նմանատիպ այլ խնդիրների կարգավորման հարցերի շուրջ:

Համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 3057, որից 118-ը մինչև 18 տարեկան, իսկ 2939-ը 18 տարեկանից բարձր անձինք:

2025թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում համայնքում գրանցվել է 535 ծնունդ և 285 մահ:

Քաղաքաշինության և հողաշինության բնագավառում

2025 թվականի ընթացքում տրամադրվել է՝

- *հողամասի սահմանների ճշգման և հատակագիծը հաստատելու մասին որոշումներ -4*
- *հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին որոշումներ -33*
- *շենքի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին որոշումներ -8*
- *հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին որոշումներ -126*
- *ինքնակամ կառուցված շինությունների օրինականացնելու մասին որոշումներ -23*

- համայնքի վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին որոշումներ -168
- օրինական սեփականաշնորհված հողամասին կից ավել զբաղեցրած հողամասի անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին որոշումներ -3
- օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին որոշումներ -132
- օրինական գյուղատնտեսական հողամասին կից ավել զբաղեցրած հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու, գյուղատնտեսական հողամասին կից 20%-ից ավել զբաղեցրած հողամասը կադաստրային արժեքի 30%-ի չափով օտարման և հողամասերի կարգավիճակի մասին որոշումներ -2
- օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասին կից 20%-ից ավել զբաղեցրած հողամասը կադաստրային արժեքի 30%-ի չափով օտարման և հողամասերի կարգավիճակի մասին որոշումներ -39
- հողամասին հասցե տրամադրելու մասին որոշումներ -484
- բնակելի տանը հասցե տրամադրելու մասին որոշումներ -361
- բազմաբնակարան շենքին հողամաս հատկացնելու մասին որոշումներ -6
- ծածկագրի ուղղման գրություններ -114
- քարտեզի ուղղման գրություններ -664
- անվան/ազգանվան/հայրանվան ուղղման գրություններ -365
- չեղյալ համարել նախկինում տրված քաղվածքները -129
- չէր կարող մասնակցել սեփականաշնորհման գործընթացին -73
- տեղեկանքներ -49
- նախագծման թույլտվություններ -218

- *շինարարության թույլտվություններ -239*
- *ավարտական ակտեր -85*
- *քաղվածքների, տեղեկանքների և որոշումների էլեկտրոնային մուտքագրում -1921*

Կապիտալ ծրագրեր

2025 թվականին մեկնարկել և իրականացվել են հետևյալ 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերը

1. Ավարտվել են Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս թիվ 3Բ հարթ տանիքի և 1-ին թաղամաս 4բ2 շենքի միայն վերելակի հորանի տանիքի, 1-ին թաղամաս թիվ 5Բ հարթ տանիքի, 1-ին թաղամաս թիվ 6Բ2 շենքի հարթ տանիքի, 1-ին թաղամաս թիվ 2Բ1 շենքի հարթ տանիքի, 1-ին թաղամաս թիվ 8Բ1 շենքի հարթ տանիքի, 2-րդ թաղամաս թիվ 1Բ շենքի հարթ տանիքի, 2-րդ թաղամաս թիվ 2Բ շենքի հարթ տանիքի, 2-րդ թաղամաս թիվ 3Բ շենքի հարթ տանիքի վերանորգման աշխատանքները, արժեքը՝ 82 187 000 ՀՀ դրամ:
2. Ավարտվել է Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 26 շենքի 830 քմ մակերեսի վերանորոգումը, արժեքը՝ 27 493 000 ՀՀ դրամ:
3. Ավարտվել է Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 40 շենքի 830 քմ մակերեսի վերանորոգումը, արժեքը՝ 32 269 000 ՀՀ դրամ:
4. Ավարտվել են 12 բնակավայրերի փողոցների գազաֆիկացման աշխատանքները, / Մեծամոր քաղաքի, Ակնալիճ, Ալաշկերտ, Արգավանդ, Հայկավան, Գետաշեն, Նոր Կեսարիա, Տանձուտ, Ջրաշեն, Երասխահուն, Ջանֆիդա, Բերքաշատ բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքները, արժեքը՝ 155 867 000 ՀՀ դրամ/
5. Մեկնարկել են և ընթացքի մեջ են թվով 16 բնակավայրերի փողոցների գազաֆիկացման աշխատանքները:

6. 2025 թվականի ավարտվել է Մեծամորի համայնքապետարանի վարչական շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները:
7. Բարեկարգվել են թվով 3 մանկապարտեզների հարակից տարածքները, /Տանձուտ, Տարոնիկ, Մեծամոր քաղաքի թիվ 3/

- *2025 թվականին ավարտվել է 2022 թվականի սուբվենցիոն ծրագրով իրականացվող Մեծամոր քաղաքի թիվ 3 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:*
- *2025 թվականին իրականացվել է 2023 թվականի սուբվենցիոն ծրագրով հաստատված << Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքները, արժեքը՝ 83 574 000 << դրամ:*

- ✓ 2025 թվականի սուբվենցիոն ծրագրով իրականացվել են Մեծամոր քաղաքի կենտրոնական փողոցների ջրագծերի փոխարինման աշխատանքները, արժեքը շուրջ 100 000 000 << դրամ:
- ✓ 2025 թվականի մեկնարկել են լայնածավալ ճանապարհաշինարարական աշխատանքներ 5 գյուղական և 1 քաղաքային բնակավայրերում -/Նորապատ, Այգեշատ, Ջանֆիդա, Բերքաշատ, Փշատավան և Մեծամոր քաղաքում կենտրոնական թվով 4 փողոցների ասֆալտապատման, մայթերի կառուցման, ստորգետնյա ջրահեռացման համակարգի կառուցման և կանաչ գոտում վերանականգման:

2025 թվականին իրականցվել են համայնքային հետևյալ ծրագրերը

1. Նորապատ բնակավայրի կենտրոնական այգու բարեկարգման աշխատանքները
2. Մեծամոր քաղաքի տարածքում Մ-5 հանրապետական ավտոճանապարհի 32-37 կմ հատվածում թվով 2 կանգառների ապամոնտաժում և տեղադրում

3. Արմավիր գյուղի արվեստի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում
4. Նոր Կեսարիա բնակավայրի մշակույթի տան շենքի գազաֆիկացում
5. Մ-5 հանրապետական ավտոճանապարհի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները
6. Մեծամոր քաղաքի թվով 2 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները, բյուջեն ավելի քանի 50 000 000 << դրամ:
7. Իրականցրել ենք համայնքի մանկապարտեզների բակերում լայնածավալ ծառատունկ:

Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բնագավառում

2025 թվականին համայնքի տրամադրվել սանիտարական ճնշակ կոյուղամաքրիչ մեքենա 1 հատ KAMAZ KO-564/KAMAZ-65115-56/՝ ՀՏԶՀ-ի կողմից իրականացվող սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի՝ Բաղադրիչ 1-ին շրջանակներում:

Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել «Աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման պլանը»:

Աղբահանությունը և սանիտարական մաքրությունն իրականացվում է 24/7 ռեժիմով: Աղբահանությունը և սանիտարական մաքրումն իրականացվում է «Մաքրություն» ՍՊԸ-ի կողմից:

27 բնակավայրերում խմելու ջրի որակի վերահսկողության պատշաճ կարգավորման համար՝ ամեն ամիս իրականացվել է լաբորատոր փորձաքննություն «ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից:

Թափառող կենդանիների կողմից վարաքակիր հիվանդությունների կանխարգելման նպատակով թվով 66 շուն ենթարկվել է ստերիլիզացման և ստերջացման:

Փշատավան, Ջանֆիդա, Այգեշատ բնակավայրերում իրականացվել են ասվալտապատման աշխատանքներ:

Նոր Արմավիր բնակավայրում իրականացվել է խմելու ջրի ջրամատակարարման ցանցի կառուցում:

Մրգաշատ, Ալաշկերտ, Նորապատ, Նոր Արտագերս, Ջրաշեն, Բամբակաշատ, Նալբանդյան, Գետաշեն, Շենավան, Զարթոնք, Տարոնիկ, Ակնալիճ, Ամասիա ներհամայնքային ավտոճանապարհներին իրականացվել են փոսալցման աշխատանքներ:

«Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ

<< Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ը 2025թ. ընթացքում կատարել է հետևյալ աշխատանքները.

1. Մեծամոր քաղաքի բարձրահարկ շենքերի վերելակների վնասված մասերի վերանորոգման աշխատանքներ:
2. Մեծամոր քաղաքի բնակելի շենքերի նկուղային հարկերի կոյուղատարերի նորգման և հարակից տարածքների դիտահորերի մաքրման աշխատանքեր՝ հատուկ տեխնիկաների միջոցով:
3. Մեծամոր քաղաքի բակերի և Մ5 մայրուղու հարակից այգու ծառերի էտման, էտված ճյուղերի մաքրման, ծառերի բուժման աշխատանքներ:
4. Մեծամոր քաղաքի բակերից շինաղբի մաքրման աշխատանքներ:
5. Մ5 մայրուղու միջնամասի վարդերի տնկման և դրանց մշակման աշխատանքներ:
6. Մեծամոր քաղաքի բնակելի շենքերի տանիքների նորոգման աշխատանքներ:
7. Մեծամոր քաղաքի բակերի ոռոգման համակարգերի նորոգման աշխատանքներ:

8. Մեծամոր համայնքի բնակավայրերի դիտահորերի և կոյուղատարերի մաքրման աշխատանքներ:
9. Մեծամոր համայնքի մանկապարտեզների կոյուղիների մաքրման, հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ:
10. Մեծամոր համայնքի վարչական շենքերի սանհանգույցների նորոգման, դռների տեղադրման աշխատանքներ:
11. Մեծամոր համայնքի բնակավայրերի գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների հարթեցման, կամուրջների կառուցման աշխատանքներ՝ հատուկ տեխնիկաների միջոցով:
12. Մեծամոր համայնքի բնակավայրերի ճանապարհների խճապատման և հարթեցման աշխատանքներ՝ հատուկ տեխնիկաների միջոցով:
13. Մեծամոր համայնքի բնակավայրերի ջրագծերի կառուցման աշխատանքներ:
14. Մեծամոր համայնքի բնակավայրերի ջրերի քլորացման աշխատանքներ:
15. Մեծամոր համայնքի բնակավայրերի և Մեծամոր քաղաքի նոր հենասյուների տեղադրման և լուսավորության անցկացման աշխատանքերի, ինչպես նաև վնասված լուսատուների փոխարինման աշխատանքներ:
16. Մեծամոր համայնքի բնակավայրերի և Մեծամոր քաղաքի բակերի խոտածածկույթի հնձման աշխատանքներ:
17. Իրականացվել է վառելափայտի տրամադրման և տեղափոխման աշխատանքեր՝ անապահով ընտանիքներին:
18. Մեծամոր համայնքի աղբավայրերի մաքրման աշխատանքներ՝ հատուկ տեխնիկայի միջոցով:
19. «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի աշխատասենյակների վերանորոգման աշխատանքներ:

«Մեծամորի ջրամատակարար» ՀՈԱԿ

Սպասարկվող բնակավայրեր: Ալաշկերտ, Ամասիա, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Երասխահուն, Եղեգնուտ, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Տարոնիկ, Փշատավան:

1. **Ջրամատակարարման համակարգի վերանորոգում և կառուցում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համակարգի ընդլայնման և վթարավերականգնողական լայնածավալ աշխատանքներ.

- *Խողովակաշարեր*: Կառուցվել է մոտ 1900 մետր երկարությամբ տարբեր տրամագծերի ջրագծեր:
- *Վթարների վերացում*: Հայտնաբերվել և օպերատիվ կերպով վերացվել են մանր ու միջին տրամագծի բազմաթիվ վթարներ:
- *Դիտահորեր*: Տեղադրվել են 5 հատ տարբեր տրամագիծի երկաթբետոնե դիտահորեր (Բամբակաշատ, Նալբանդյան, Եղեգնուտ):
- *Բաշխիչ կայաններ*: Կառուցվել են թվով 9 բաշխիչ կայաններ, ինչը թույլ է տվել բարելավել ջրի բաշխման արդյունավետությունը:
- *Փականներ*: Տեղադրվել են 15 հատ երկաթյա ու թուջե փականներ և հետադարձ փականներ:

2. **Պոմպակայանների վերազինում և տեխնիկական սպասարկում**

Ջրի անխափան մատակարարումն ապահովելու համար կատարվել են հետևյալ տեխնիկական թարմացումները.

- *Պոմպեր*: Տեղադրվել են 6 հատ տարբեր հզորությամբ ջրի պոմպեր:
- *Էլեկտրական մալուխներ*: Պոմպակայաններում փոխարինվել է 100 մ պղնձյա մալուխ:
- Կատարվել է բետոնացման աշխատանքներ՝ սյուների տեղադրմամբ:
- *Անվտանգություն*: Ցանկապատվել են թվով 6 պոմպակայաններ՝ սահմանված սանիտարական և անվտանգության գոտիներն ապահովելու համար:

3. **Էլեկտրական համակարգեր և ավտոմատացում՝**

Իրականացվել է էլեկտրական հանգույցների և պաշտպանիչ սարքավորումների արդիականացում.

- *Թողարկիչներ*: Փոխարինվել են 11 հատ տարբեր հզորության եռաֆազ թողարկիչներ:
- *Անջատիչներ*: Փոխարինվել են 9 հատ տարբեր հզորության ավտոմատի անջատիչներ:
- *Ռելեներ*: Փոխարինվել են 37 հատ ժամանակի և ֆազի բացակայության ռելեներ :
- *Էլեկտրական տուփեր*: Տեղադրվել են 3 հատ նոր էլեկտրական տուփեր:

4. **Սանիտարահիգիենիկ միջոցառումներ**

- Բնակչությանը մատակարարվող ջրի որակը սահմանված նորմերին համապատասխանեցնելու նպատակով իրականացվել է բոլոր նշված բնակավայրերի խմելաջրերի քլորացում:
- Կատարվել է կոյուղաջրերի հեռացման համակարգի կառուցման և նորոգման աշխատանքներ (Շենավան, Արմավիր):
- Կառուցվել է մոտ 200մ երկարությամբ ջրահեռացման և ոռոգման համակարգերի (Հայկավան, Այգեշատ, Բամբակաշատ):